

Թ. ՄՈՄՁԷՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ *)

(Գերմանական Միութիւնը պատրաստող պատմագիրները)

II

Գերմանացի մի տաղանդաւոր հրապարակախօս՝ Կարլ Հիլլբերգհայն, 1874 թ. գրում էր հետեւեալը.

«Պատմութիւնը Գերմանիայում, չնայելով նրա գլխաւոր հեղինակների իրանց վերադրած անկողմնապահութեան, ամենից առաջ ազգային է և բողոքական: Պարոն պրոֆեսսորներն ազատ են ամենատեսակ իլլիւզիաներ ունենալ իրանց «գիտական անկաշառութեան», իրանց «խղճի շիտակութեան» և «մեթոդի անսխալականութեան վրայ», նրանք կարող են իրանց գործը համարել միանգամայն «օբիեկտիւ»... Բայց անկարելի է ուրանալ, որ նրանք՝ ուզելով՝ կամ ակամայ, իմանալով՝ թէ անգիտակցաբար ծառայել են ազգային և բողոքականութեան շահերին, նրանք պատմութեանը տուել են իրանց երեւակայութեան ձեւը: Պատմական փաստերից նրանք ընտրել են այնպիսիները, որոնք պիտանի էին իրանց հայեցակէտներին: Համալրաւորանական նստարանների վրայ ուսած գիտութիւնը նրանք շտապել են սոսկալով միմիայն ազգային բողոքական ձգտումները» **):

Այս վճռական մեղադրանքը եթէ ոչ իր ամբողջութեամբ, գէթ մասնակի կերպով վերաբերում է գերմանական շատ խոշոր պատմաբաններին: Անգամ այնպիսի խոշոր, անաչառ ու խորիմաստ գիտուն, որպիսին է Ներուր, անկարող է եղել ազատ մնալ գերմանական ազգային տենդենցիայից՝ չնայելով իր զատ գիտական ոգուն, իր պատմական հրաշալի մեթոդին, որ ժամանակակից պատմագրութիւնն այնպէս հիմնական ձևով յեղաշրջեց:

*) Տե՛ս «Մուրճ», № 1.

**) A. Guillemand: *L'Allemagne nouvelle et ses historiens*. Այս յօդուածը կազմելու ի միջի այլոց ձեռքի տակ ենք ունեցել Ցիւրիխի պոլիտեխնիկումի պրոֆեսսորի յիշեալ ֆրանսերէն հետաքրքիր աշխատութիւնը:

Բանն այն է, որ Ներուր իր «Հռոմէական պատմութիւնը» գրեց Ննայի ճակատամարտից, Գերմանիայի կրած ազգային այդ խոշոր դժբախտութիւնից յետոյ *): Ամենից աւելի պատժուածը Նապոլէոնի ձեռքով Պրուսիան էր և պրուսական ժողովուրդը. այնուամենայնիւ Ներուր ինչպէս և ուրիշ գերմանացի պատմաբանները՝ մարգարէի հեռատեսութեամբ այդ իսկ երկրի վրայ են կենտրոնացնում իրանց ուշադրութիւնը և այդ ժողովրդի ոգին աշխատում են ներկայացնել որպէս նմուշ և հիմունք ապագայ գործի։ Ահա թէ ինչ կարծիք ունի Պրուսիայի մասին Ներուրը.

«Եթէ դու ճանաչէիր այս ժողովուրդը (պրուսական), դրում է նա 1807 թւին իր բարեկամներից մէկին, դու նրան արժանի կը համարէիր քո սիրուն։ Այժմ ոչ մի տեղ գոյութիւն չունի այնքան ոյժ, լրջութիւն, հնազանդութեան զգացմունք, հոգու մեծութիւն, որքան այս ժողովրդի մէջ։ Եթէ այս ժողովուրդը լաւ կառավարուէր, նա անյաղթելի կը լինէր։ Եւ չնայելով մեր՝ երկրի վրայ ընկած մրրկի կատաղութեան՝ նոյն ոգին դեռ վառ է այս ժողովրդի մէջ»։ Ներուր դժգոհ է կառավարիչներից, դժգոհ է նաև երիտասարդութիւնից, որին նա չի գտնում իր կոչման բարձրութեան վրայ։ Եւ ահա այս «երիտասարդութիւնը վերածնելու և նրան մեծ գործերի ընդունակ դարձնելու համար» նա վճռում է գրել իր «Հռոմէական պատմութիւնը»։

Եւ այդ պատմութիւնը մի հրաշալի գործ է. թէ իբրև մեթոդ և թէ իբրև ուսումնասիրութիւն։ Կարելի է ծայրէիծայր այն քաղել՝ առանց նկատելու աշուուրեան, ազգային տոհմ-դենցիայի նշոյլ, այն աստիճան սառն, գիտական ոգին թւում է գերիշխող։ Բայց երբ կարդում ես Ներուրի մասնաւոր նամակները այդ գործի մասին, երբ ծանօթանում ես նրան առաջնորդող զգացմունքների և մտքերի հետ, այն ժամանակ բացւում է ոչ թէ գիտականի, այլ գերմանացի մարդու վերաւորուած արիւնաքամ սիրտը, ուր իշխում է իր հայրենիքը վերակենդանացնելու միակ և հրամայող իղձը։ Միևնոյն ժամանակ պատմական փաստերի վրայ ճառագայթող լոյսը իր ցոլեցրով արդէն ցոյց է տալիս մշուշապատ հեռավորութեան մէջ գիտականից դուրս՝ մի այլ նպատակ—Գերմանիայի վերածնութիւնը։

Մի հետաքրքիր զուգադիպութեամբ՝ ինչպէս Ֆրանսիա-

*) Նրա «Հռոմէական պատմութեան» առաջին մասը լոյս տեսաւ 1811 թւին, երկրորդ մասը՝ յաջորդ տարին։

Վան պատմաբանները Սեդանից յետոյ, նոյնպէս և գերմանական պատմաբանները Ննայից յետոյ իրանց ազգային դժբախտութիւնը համարում են արդիւնք վատ կառավարութեան և առաջնորդների անընդունակութեան:

«Պրուսիայի ստորացման դժբախտ ժամանակները, գրում է Ներուր Ֆրանց Լիբերին, սատարեցին իմ գործի արտադրութեանը: Մենք ուրիշ բան չունինք, բայց եթէ յուսալ լաւ օրեր և պատրաստուել նրանց համար: Իսկ մինչև այդ լճնչ անել: Ես յետ դարձայ դէպի վաղուց հետէ անհետացած մի մեծ ժողովուրդ իմ և իմ ունկնդիրների ոգին ամրապնդելու համար: Ինձ էլ վիճակուեց այն, ինչ Տակիրտոսին» *):

Ազգային ոգին ամրապնդելու, նրան նոր եռանդ ներշնչելու համար աւելի լաւ ընտրութիւն անել անկարելի էր: Նապոլէոնի ստուերը կարծես ամեն տեղ նրա աչքի առաջն է, և պատմաբանը անողորմ է դէպի բոլոր բռնակալները, միշտ պաշտպան գրկուածների, թոյլերի, հալածուածների դատի: Յետոյ կը գան ուրիշ պատմաբաններ աւելի գոռոզ ժամանակներում, երբ Գերմանիան ինքը բռնանալու հնարաւորութիւն կ'ունենայ, և նրանք խուճկ կը ծխեն կեսարներին և կը հռչակեն ոյժի իրաւունքը: Բայց Ներուրը խօսում էր վիրաւոր, աբիւնաքամ Պրուսիային, որ 1870 թ. դեռ երազել չէր կարող: Գերմանիայի համար պատմութեան հին դասերի վրայ խորհելու օրեր էին, և Ներուր դնում է նրա աչքի առաջ մի հրաշալի օրինակ անցեալից, թէ ինչպէս «Լատիոսի հովիւ ժողովուրդը կարողացաւ դառնալ ամբողջ Իտալիայի և ապա ամբողջ աշխարհի տէրը»: Խրատական, վերին աստիճանի օգտակար էր անշուշտ, որ «անհայրենիք և առանց պետութեան» **) գերմանացիները տեսնեն հին պատմութեան մէջ «ազգային զարգացման մոդել» համարուող հռոմայեցի ժողովուրդը: Կարծես նա կանխատեսնում է, որ Պրուսիան ապագայում դառնալու է գերմանական Լատիոսը, որ պիտի աճի, փռուի և ծածկի ամբողջ Գերմանիան: Հսկայական և զեղեցիկ գործ, որի համար հարկաւոր է խորին հաւատ և ահապին զոհաբերութիւններ: Ներուրի ժամանակների Գերմանիան, չնայելով դառն դասին, այնուամենայնիւ հռու է պատմաբանի ցանկացած ազ-

*) Տակիրտոս հռոմայեցի պատմադիր, որ Տրայիանոսի օրերում (98—117) է միջի այլոց նկարագրեց «գերմանացիների բարբերը»: Հռոմի մեղկութեան, անկման շրջանում այս աշխատութիւնը, ուր զովարանում էին մի բարձրագոյն ժողովրդի առնական առաքինութիւնները, անընկճելի եռանդը, ասոյժ ոգին, որոշ խորհուրդ ունէր կարծես: Այդ է քիչարկում Ներուր:

**) 2ակերտների մէջ Ներուրի խօսքերն են:

գային գիտակցութիւնից, և նա տխուր էր, հայրենասիրական խորին վշտով արտասանում է հետեւեալ նշանակալից խօսքերը, որ որքան յուսահատական, նոյնքան և ազգային եռանդը բորբոքող են: «Ես մարդիկ եմ ճանաչում, ասում է Ներսէս իր մի նամակում, որոնց պատւից զուրկ համարելու իրաւունք չունիմ, բայց որոնք անընդունակ են զոհերի ու ոգևորութեան և յոյսերի, որոնք նուազ դժբախտութիւն են համարում օտար տիրոջ լծի տակ ստրկանալ, քան թէ ազատաբար պատերազմի դժուարութիւնները կրել, կամ որոնք կարծում են, թէ ամեն մի զոհաբերութիւն անմտութիւն է, որովհետեւ յաջողութեան քիչ յոյս կայ և մասսաները միշտ անտարբեր են դէպի իրանց վարող ձեռները: Գանձ-քանի անգամ ես կը կամենայի մեռնել իմ սիրելիների հետ: Եւ այդպիսի մահուան համար ես զոհութիւն կը յայտնէի Աստծուն»:

Ժողովրդական-ազգային մեծամեծ դժբախտութիւնների ժամանակ զարհուրելի բան է Ներսէսի ակնարկած «պատուաւոր» մարդկանց անգիտակից խաղաղութիւնը: Եւ երբ այդ «պատուաւոր» մարդիկ սկսում են նաև փիլիսոփայել սեփական երկչոտութիւնն ու ոչնչութիւնը քօղարկելու համար, երբ նրանք փորձութիւնների հանդէպ աշխատում են խաղալ նաև քաղաքագէտների և իմաստուն խորհրդատուների դեր, այն ժամանակ դառնում են և՛ դարձելի, և՛ վտանգաւոր: Անշուշտ խոշոր վտանգը նրանց քարոզը չէ, այլ այն, որ նրանք «պատուաւորներ» են: Ինչպէս ամեն մի երկրում, նոյնպէս և Գերմանիայում այդպիսիների թիւը սակաւ չի եղել: Եւ ահա Ներսէս դառնացած սրտով զգուշացնում է նրանցից երիտասարդ սերունդը և՛ դէսում է նրա աչքի առաջ հոռմայեցիների մարտնչող առաքինութիւնների օրինակը որպէս հակապատկեր իշխող ժամանակակից բարքերի: Հասկանալի է, թէ ինչո՞ւ Ներսէս «Հոռմէական պատմութիւնը» գերմանացի երիտասարդ սերունդների համար եղաւ անսպառ ոգևորութեան և խորհուրդների աղբիւր: Նրանք կարողացան այդ գիտական աշխատութիւնը կարգալ տողամէջ: Եւ Տրէյչկէն իրաւացի կերպով ներկատում է, որ «Հոռմէական պատմութիւնը» աւելի շուտ մի ապրիւմ գործ է, քան թէ արդիւնք գիտական ուսումնասիրութիւնների:

*
* *

Լէոպոլդ Բանկէն արժանաւոր աշակերտն է Ներսէսի, նոյնքան տաղանդաւոր և ոչ պակաս հայրենասէր, քան իր ու-

առջիչը: Այս երկու գիտնականները իրանց երկերով լրացնում են իրար և իւրաքանչիւրը իր ձեռով օժանդակում է Գերմանիայի վերածնութեան գործին: Եթէ Նեբուր մի հին ու մեծ ազգի օրինակով աշխատում էր իր ընկճուած հայրենակիցներին մէջ հաւատ դարձեցնել դէպի ապագան և մատնացոյց անել Պրուսիան իբրև առաջնորդ, Բանկէն յանձն առաւ մի ուրիշ պարտք, ոչ պակաս կարևոր և ծանր:

XVIII դարի Ֆրանսիան նախ իր Վոլտերով, Բուսսօմ, իր Էնցիկլոպեդիստներով, ապա իր Մեծ Յեղափոխութիւնով բարոյապէս և մտաւորապէս ընկճել էր Գերմանիան ի վնաս նրա ազգային անհատականութեան: Նապոլէոնի նիւթական նուաճումը միայն շարունակութիւն և լրացումն եղաւ վաղուց հետէ սկսուած բարոյական նուաճումին: Գերմանացի հայրենասէրների կարծիքով հարկաւոր էր ազատուել ոչ միայն նապոլէոնեան լծից, այլ առ հասարակ ֆրանսիական ազդեցութիւնից, և ազգային նկարագիրը, անհատականութիւնը վերականգնել իր ներքին և արտաքին ամբողջութեամբ *): Բանկէն մէկն է այսպէս մտածողներից և Ֆրանսիականութեան հմայքը ցրելու համար նա գործ է դնում իր տաղանդի և հմտութեան ամբողջ ոյժը: Նա հաւատացած է, որ իւրաքանչիւր ժողովուրդ իր հոգու խորքում կրում է մի օրիգինալ, ինքնուրոյն անհատականութիւն, և որ այդ քնած ոյժը արդիւնաւէտ, բեղմնաւոր դարձնելու համար անհրաժեշտ է դուրս քաշել այն և դարգացնել նորմալ պայմաններում: Էտնօպալիսօլոգիական տեսակէտից միանգամայն ճշմարիտ, հիմնաւոր այս հայեացքը շնորհիւ որոշ ժամանակակից պայմանների՝ Բանկէին ձգում է ծայրայեղութիւնների մէջ, և նրա պատմական վարդապետութիւնը ընդունում է համարեա հակաֆրանսիական կերպարանք: Գերմանական անհատականութիւնը բարձրացնելու և օտարի խնամակալութիւնից ազատելու համար նա հարկ է համարում Ֆրանսիան և Ֆրանսիականութիւնը ներկայացնել տիւրը գոյներով: Գերմանացիներին ամենից աւելի դրաւողը ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնն է, որ իր լայն համամարդկային գաղափարների փայլով ասես շացրել էր նրանց: Եւ ահա Բանկէն ծանրանում է պատմական այդ անօրինակ և բեղմնաւոր շրջա-

*) Անցեալ դարի սկզբից սկսած այդ աշխատանքը յամառաբար շարունակում է և այսօր: Յայտնի է, թէ գերմանական կայսրը այժմ կատաղի թրշնամի է ֆրանսերէն բառերի և տերմինների և ամեն կերպ աշխատում է այդպիսիները փոխանակել գերմաներէնով: Իրաւ է, այդպիսի փորձերը յաճախ դառնում են ծիծաղելի և կարբեկատուների նիւթ, բայց գերմանացիք չեն յոգնում, նրանք յամառ են և տոկոմ:

նի վրայ և ճգնում է խել նրա վարիչների ճակատների դադարները՝ նսեմացնելով մեծ գործի արժեքը:

Ահա թէ նա ինչպէս է ներկայացնում Ֆրանսիական ժողովրդի հոգեբանութիւնը. «Օժտուած ազգային հզօր զգացմունքով, ասում է Րանկէ, փառասէր, աշխարհակալութեան սիրահար, պատերազմող Ֆրանսիացին միշտ պատրաստ է յարձակուելու, միշտ պաշտպանւում է իրական կամ երեակայական թշնամիների դէմ և ճնշում է ազատ ժողովուրդներին» *): Այսպիսով ըստ Րանկէի դուրս է գալիս, որ Ֆրանսիական բոլոր յեղափոխութիւնները միայն պատրուակներ են հարկան ժողովուրդների վրայ յարձակուելու և նրանց ազատութիւնը խելու համար: Կասկած չկայ, որ գրելով այն տողերը՝ Րանկէն ի նկատի ունի այն բուռն ոգեւորութիւնը, որով գերմանացիներն ընդունեցին Ֆրանսիական յեղափոխութեան և նոյնիսկ նապոլէոնեան գնդերին: Նա հաւատացած է, որ իր հայրենակիցներին շատ շատերը դեռ շարունակում են հիացմունքի նման մի զգացմունք տածել դէպի իրանց հարաւային հարևանները, դէպի նրանց քաղաքակրթութիւնն ու լայն գաղափարները, և ահա այդ զգացմունքի դէմ է կուռում նա: Նրա ցանկութիւնն է, որ գերմանացին ինչ որ անելու է, անի ոչ թէ միանգամայն անկախ, ինքնուրոյն կերպով, այլ բացարձակապէս հակառակ Ֆրանսիականին:

«Մենք, ասում է նա, պէտք է կատարենք մի զուտ գերմանական գործ, որ միմիայն մեզ է վերաբերում: Մենք պէտք է կազմակերպենք իսկապէս գերմանական մի պետութիւն, որ համապատասխանէր մեր ցեղի հանճարին: Ամենից առաջ մենք պէտք է զգուշանանք հետեւելու այն ձևերին, որ Ֆրանսիացիք իրանց համար պատշաճ են գտել... Թող նրանք լինին, ինչ որ կամենում են, իսկ ինչ մեզ է վերաբերում, ես կ'ասեմ, որ մեր գրական գեղեցիկ շրջանի բոլոր ջանքերը, բոլոր մեր մեծ մարդկանց գիտնական արդիւնքները, բոլորն՝ ինչ մեծ է Գերմանիայում, յաջողուել է միմիայն այն դէպքում, երբ Ֆրանսիականին բոլորովին հակառակ է տարուել» **):

Նւ ահա իր այս հայեացքներն են, որ նա մեծ հմտութեամբ ու տաղանդով արտայայտել է մի շարք նշանաւոր աշխատութիւնների և մասնաւորապէս «Պորհրդածութիւններ Ֆրանսիական յեղափոխութեան վրայ»-ի և Ֆրանսիայի պատմութեան մէջ:

*) Ranke: «Préface de l'histoire de France».

**) Ranke: «Histoire des peuples germaniques et romans».

Մինչև իր կեանքի վերջը նա եղաւ պրոուսականութեան և Վիլհելմ I-ի քաղաքականութեան շերտ պաշտպան: Զարմանալի չէ, որ Րանկէի մահից յետոյ (1886 թ.) Բիսմարկ պէտք համարեց գրել նրա որդիներին, թէ ինքը միշտ գաղափարակից է եղել նրանց հօրը *):

*
* *

Ինչ և լինեն ներուր և իր աշակերտ Րանկէ պրոուսականութեան համար Գերմանիայում, նրանք այնուամենայնիւ իբրեւ պատմաբաններ զուտ գիտական տեսակէտից աւելի գնահատելի և աւելի անաչառ են, քան իրանց այնպիսի յաջորդները, ինչպէս Հանրի Զիբըլ և Տրէյչիկէ: Պրոուսական ոգին և Հոհենցոլլերները գուցէ երբէք աւելի տաղանդաւոր և միևնոյն ժամանակ աւելի եռանդուն համոզուած պաշտպան չեն ունեցել, քան այս երկու պատմաբանները: Մէկը (Զիբըլ) իր «Եւրոպայի պատմութիւնը Քրիստոսական յեղափոխութեան ժամանակ» և միւսը (Տրէյչիկէ) «Գերմանիայի պատմութիւնը XIX դարում» աշխատութիւններով կատարել են իսկական ազգային պրոպագանդիստներ ղեր: Պատմութիւնը նրանց ձեռքին եղել է միայն մի լաւ միջոց զուտ գերմանական ազգային նպատակներ համար: «Զիբըլ, ասում է Գիլյան, ամեն ինչ ստորադասում է իր գաղափարներին: Անցեալի բոլոր հանգամանքները նրա համար լաւ պատրուակներ են դրուատելու համար Հոհենցոլլերների հաստատութիւնների գերազանցութիւնը և ազգային-ազատամիտների սկզբունքների ճշմարտութիւնը»:

Շույց տալու համար, թէ մինչև որ աստիճան Զիբըլ աչառոտ է իբրեւ պատմաբան, բաւական է յիշել էմսի չարաբաստիկ հեռագրի պատմութիւնը: Յայտնի է, որ Բիսմարկ իր թագաւորի վրայ ազդելու և պատերազմը Ֆրանսիայի հետ անխուսափելի դարձնելու համար պարզապէս կեղծեց և այնպէս ներկայացրեց Վիլհելմին այդ հեռագիրը:

Ահա այս նշանաւոր պատմական կեղծիքի մասին է, որ Զիբըլ ասում է՝ «կրճատել չի նշանակում կեղծել»։ անշուշտ նա լաւ գիտէ, որ շատ հեշտ է հեռագիրն այնպէս կրճատել, որ բոլորովին հակառակ բովանդակութիւն և նշանակութիւն ստանայ, բայց Բիսմարկի բոլոր արածները նրա աչքում լաւ են գերմանական գերագոյն շահերի տեսակէտից, ուստի և ճշմում է արդարացի:

**) Guillaud: «L'Allemagne nouvelle»

Անկարող լինելով երկար կանգ առնել այս վերին աստիճանի նշանաւոր պատմաբանի գործերի վրայ, բաւականանալ հետեւեալ բնորոշումով, որ որքան հակիրճ է, նոյնքան ճիշտ:

«Այն ժամանակ, երբ Զիբըլ գրում էր, ասում է Գիյան, պատմաբանի ամենասահրաժեշտ պարտքն էր իր ազգի քաղաքական հասունութիւնը պատրաստել: Զիբըլ մի այդպիսի գործի համար հիմնալի պատրաստութիւններ ունէր իր պայծառ, վճռական, սուր մտքով, իր մի փոքր չոր, վտիտ, բայց վճռական ձեւերով, իր սառն, բայց խայթող հեգնութիւնով: Շնորհիւ իր զօրեղ և արագ խելքի, որ այնպէս ընդունակ էր հապճեպ պատասխանի, նա կարողանում է յաջողակ կերպով խաղալ գաղափարների հետ և նրանց ներկայացնել ցանկացած լուսաբանութեամբ, իսկ իր միանգամայն ինքնատիպ տաղանդը նրան հնար է տալիս նոյն գաղափարները դնել նաև գիտութեան հեղինակաւոր պաշտպանութեան տակ: Ահա թէ ինչու կարելի է ասել, որ Զիբըլ իր մեթոդիկ գործով իր երկրում ազգային-ազատամիտների քաղաքական գաղափարների կոչման համար աւելի է արել, քան ովեւիցէ: Իսկ այդ գաղափարները նոր կայսրութեան մէջ իշխող դարձան: Լորդ Ակտօն հրաշալի կերպով է արտայայտում Զիբըլի արածը: «Նա կարողացաւ, ասում է Ակտօն, դիսցիպլինայի ենթարկել աշխատասէր գերմանացիների ծանր, ճապաղ և զարմանալի կերպով անքաղաքագէտ տաղանդը: Նա կարողացաւ նրանց գլուխը մտցնել իրականութեան ճաշակը» *):

Եթէ Զիբըլ մի սառն, կծու քննադատ էր, որ ազդում էր խելքերի վրայ, Տրէյչիկէ մի բանաստեղծ է, մի հոռտոր իմպերիալիստ, որ հասնում է ճիշտ այն ժամանակ, երբ հարկաւոր է փառաբանել Հոհենցոլլերների կատարածները և հռչակել նոր կայսրութեան փառքը և գեղեցկութիւնը:

Դեռ 1870 թւից շատ առաջ նա գրում էր. «Մենք չունինք գերմանական հայրենիք. միմիայն Հոհենցոլլերները կարող են մեզ մի հայրենիք պարգեւել»: Մի ուրիշ տեղ. «Մի բան է միայն մեզ պակասում—պետութիւն... օտար նաւահանգիստներում ոչ մի թնդանօթի ձայն չի ողջունում գերմանական դրօշակը. մեր հայրենիքը ծովերի վրայ առանց դրօշակի է, ինչպէս մի ծովահէն»: Նրան ևս առաւել դայրացնում է իր հայրենիքի այդ ըստորադասումը, քանի որ իր կարծիքով հարեանները՝ անգլիացիք և ֆրանսիացիք ոչինչ չարժեն: Գերմանական ոչ մի լուրջ պատմաբան այնպէս բացերես ատելութիւն չի քարոզել դէ-

*) Guillard: «L'Allemagne nouvelles».

պի օտարները, որքան Տրէյչիկէ. «արծաթասիրութիւնը, բացառանչում է նա, սպանել է անգլիացիների պատույ զգացմունքը և արդարն անարդարից զատելու կարողութիւնը: Ներանք ծածկում են իրանց երկշոտութիւնը և նիւթապաշտութիւնը աստուածաբանական խոշոր ֆրազների տակ»: Տրէյչիկէ նոյնքան անողորմ է դէպի ֆրանսիացիները, որոնց վերաբերմամբ նա չի դադարում շարունակ զգուշացնել իր հայրենակիցներին: «Ֆրանսիացիներն, ասում է նա, աշխարհի ազատութիւնը ամենամեծ վտանգների կ'ենթարկեն եթէ գերմանական ժողովուրդները չհակեն»: Եւ այդ հսկողութիւնը ըստ Տրէյչիկէի պէտք է կատարուի պատերաճներով, անվերջ արիւնհեղութիւններով: Հեղելի «Պատմութեան փրկիստիպայութիւնը դարձել է Տրէյչիկէի համար սրբութիւն սրբոց, և նա բարձրագոյն յայտարարում է պատերազմի, հզօրի իրաւունքի, գոյութեան կռիւ անողորմ, բիրտ տրամաբանութիւնը մարդկային անհատների ու խմբերի և ցեղերի յարաբերութիւնների մէջ: «Գերմանացիներին վայել չէ կրկնել, ասում է նա, առաքեալների խաղաղութեան սովորական խօսքերը, և ոչ էլ փակել աչքերը դարի անողորմ անհրաժեշտութեան առաջ: Այո, մեր ժամանակը պատերազմի ժամանակ է, մեր դարը երկաթի դար է... Եթէ հզօրը ընկճում է թոյլին, դա կեանքի անհերքելի օրէնքն է»: Պատերազմը, արիւնհեղութիւնը այնքան խոշոր նշանակութիւն ունի նրա աչքում ազգերի բախտի համար, որ նոյնիսկ իր սեփական կարողութիւնը, գրողի իր ձիրքը նրան ոչինչ է թւում: Այսպէս Սադովայից յետոյ նա գրում է. «Այն մարդը, որ գրիչ ունի ձեռքում, զգում է դառնապէս, թէ որքան չնչին է իր գործը: Ամեն մի դրակոն, որ հարուածում է մի խրոակթի, այս վայրկենին աւելի է անում գերմանական դատի համար, քան թէ ամենանրբամիտ բաղաքագէտը իր ամենալաւ գրչով»:

Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Տրէյչիկէ էլ պատմաբան չէ, նա մի կատաղի պրոպագանդիստ է: Գերմանիան նրա համար նախախնամութեան պատժող ձեռքն է, որ գալիս է հարուածելու և «սրբելու խեղդող գարշահոտութիւնը, երկրորդ կայսրութեան զզուելի անառակութիւնները»: Վերջապէս նոր դարագլուխ է բացւում մարդկութեան համար, և Գերմանիան «իր բարոյական հարուստ կուլտուրայով դառնալու է շուտով ազգերի դաստիարակը»:

Նրա հայրենասիրական ողևորութիւնը ֆրանս-պրուսական պատերազմի առիթով հասնում է այնպիսի ծայրայեղ աստիճանի, որ պատմաբանը զինւորական թմբուկների աղմուկով ներշնչուած՝ գրում է ռազմական մի բանաստեղծութիւն—«Մե

արծւի օգնան»։ Թէ որպիսի մտաւոր կերակուր է ստանում այդ ժամանակի երիտասարդութիւնը իր դաստիարակիչներէց, շատ պերճախօս կերպով ապացուցանում է այդ խիստ յայտնի բանաստեղծութիւնը, որ մէջ ենք բերում ամբողջապէս թարգմանաբար ֆրանսերէնից.

«Սև՛ արծիւ, քո հուժկու թևերը շառաչում են թափով, և պայծառ աչքդ տեսնում է Տևտոն հերոսների գնդերը և նրանց փայլուն զէնքերը։

Օ՛ր, քանի ժամանակ է, ինչ դու թռել ես Սուաբի հայրենի դղեակից և երկու դարից յետոյ այժմ միայն վերադառնում ես յաղթական։

Մեր ազգը երջանիկ նախազգացումով ընթանում էր քո բացած ճանապարհով. կը գտնե՞նք արդեօք կորցրած բախտը, Հոհենշտաֆենի կայսրութիւնը յետ կը գտնայ արդեօք։

«Լսի՛ր, անպատկառ ֆրանկը նախանձում է մեր բախտին և իր բիրտ կատաղութեամբ ծաղրում է մեր ծերունի թագաւորին։

«Վրայ տուէ՛ք, գերմանացի մարտիկներ, ամենքդ ոտքի ելէ՛ք. արի ձիաւոր, սանձիւր քո երկվարը. որսորդ, թող քո առանձնութիւնը։

«Ամենքդ էլ յառաջ դէպի վերջին արիւնոտ ճանապարհորդութիւնը։ Յաղթութեան դափնիների համար յետ առէ՛ք Ստրասբուրգի կաթնդարը և ազատեցէ՛ք գերմանական գետը» (Հոհենոս)։

Իբրև պրոպագանդիստ մի գաղափարի, որ նա արդար է համարում, Տրէյչիկէն գուցէ իր տեղումն է, բայց իբրև պատմաբան նա անտանելի է։ Նրա «Գերմանիայի պատմութիւնը» ծայրէիծայր չի է մի գիտական ուսումնասիրութեան անվայել դարձուածքներով։ Նա միշտ թունոտ բառեր ունի բոլոր նրանց համար, որոնց այսպէս թէ այնպէս նկատում է գերմանական շահերին հակառակ։ Անզուսպ կիրքը, խորին ատելութիւնը դէպի օտարները, ծայրայեղ կողմնապահութիւն դէպի իր հայրենակիցները, ահա թէ ինչով է առաջնորդւում Տրէյչիկէն իր պատմութեան ընթացքում։ Թէ ինչ լեզու է գործածում Տրէյչիկէն հակառակորդների մասին՝ ապացուցանում է հետևեալ քաղուածքը նրա «Գերմանիայի պատմութիւնից»։ «Ինչպէս և լինի ֆրանսիական կառավարութիւնը, Ֆրանսիան այնուամենայնիւ կը մնայ միշտ ռուսիկանների, քաղաքային պահակի ստոր ծառայութեան իշած զինւորի, աչառոտ դատարանների, պարլա-

մենտական դատարկ ֆրազների, ժողովրդի բթամտութեան և կաթոլիկական մոլեռանդութեան երկիր»:

Աւելի ցաւալին այն է, որ Տրէյչիկէ միանգամայն ընական և նոյնիսկ անհրաժեշտ է դտնում կողմնապահութիւնը պատմաբանի համար: Նրա կարծիքով լաւ պատմագիրը անաչառ լինել չի կարող: «Անաչառ պատմաբանի փառքը, բացառաւորութիւն է նա, ինձ երբէք զրաւել չի կարող, ինձանից անկողմնակալութիւն պահանջել, նշանակում է պահանջել անկարելին: Վերջապէս այդ հիւանդոտ անաչառութիւնը հակառակ է պատմական իսկական մեթոդին... Բոլոր խոշոր պատմաբանները անկեղծօրէն խոստովանել են իրանց կողմնապահութիւնը. Թիւրքիոյէն աթենացի էր, Տակիտոսը՝ արիստօկրատ»:

Ահա այն մարդը, որ պրուսական իմպերիալիզմի սատարին ու ջատագովն եղաւ իր ամբողջ կեանքի ընթացքում, որ պրուսական չորացնող, ճնշող ոգու ազդեցութեանն այնքան նշւապատեց թէ իբրեւ ուսուցիչ, թէ իբրեւ պրոպագանդիստ: Եւ ահա նոյն մարդն էր, ինչպէս տեսանք այս յօդուածի սկզբում, որ 1895 թ. իր ծեր գլուխը օրօրելով տխրութեամբ կրկնում էր. «Ամեն բան դարձել է բիրտ մեր բարքերի մէջ»... Նա կարծես մոռացել էր այդ ժամանակ, որ գերմանական քաղաքական և հասարակական բարքերի այս «բրտութիւնը» պատրաստելու մէջ ոչ ոք իրան հաւասար բաժին չունի, ոչ ոք այնքան եռանդ, ժամանակ և լինք չի մաշել, որչափ ինքը: Նա անկեղծօրէն հաւատացած էր, որ Պրուսիայի յաղթանակը փայլուն դարագլուխ բաց կ'անի աշխարհի պատմութեան մէջ և ազգերի ազատութիւնը կ'ապահովի Յրոսիսի ոտնձգութիւններէ: Թէ որչափ արդարացան նրա յոյսերը, ապացուցանում են վերեւ յիշուած դառնացած խօսքերը և պրուսական լեհերի ներկայ վիճակը: Երկու տարի առաջ Վրեշէն լեհական փոքրիկ քաղաքի դպրոցում գերմանացի ուսուցիչները հնարաւոր էին գտել յանուն «գերմանական ազատութեան» կարգով ծեծել ընդունելի մանուկներին, որովհետեւ նրանք հրաժարուել էին գերմաներէն պատասխանել կրօնի դասը: Մանուկներից շատերը գերմանական ուժեղ բռնացքների տակից կիսամեռ հասան տուն, իսկ բողոքող ծնողներին դատարանը դատապարտեց ամիսների և տարիների բանտարկութեան: Եւ «ազատ» Գերմանիայի «ազատ» մամուլը—ընկերավարականներից բացի—ողջունեց հայրենասէր ուսուցիչներին և «անաչառ» դատաւորներին յանուն գերագոյն ազգային շահերի: Տրէյչիկէն այդ ժամանակ կենդանի չէր տեսնելու համար իր փառաբանած «գերմանական ա-

զատութիւնը» և պրոսական ոգին: Սակայն բաւականանալ
այսքանով. ես համառօտակի անցայ յիշուած չորս պատմա-
բանների վրայով, որպէսզի աւելի երկարօրէն զբաղուեմ Մոմ-
զէնով, որի մահը առիթ տուեց յօդուածների այս շարքին:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
